

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Ֆադեյ Սարգսյան.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք.....4
- 3- Լուրեր – Իրան.....6
- 4- Լուրեր – Հայաստան.....6
- 5- Միջազգային.....6
- 6- Հասարակական.....7
- 7- Մշակույթ10
- 8- Խոհեր.....10

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանա-Հայաստան..1
- 2- ԻՒ Հեղափոխ. ժամանակագրություն.....2

Ճապիկի առաջին էջում՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

Վերջին էջում՝

«Քարավան» պարաֆսումբը

Համար 155, Փետրվար 2010 թ.

No. 155, February 2010

ماهنامه لویس - شماره ۱۵۵ بهمن ماه ۱۳۸۸

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ



ARMENPRESS

Հունվարի 10-ին 87 տարեկանում մահացավ պետական ականավոր գործիչ, հաշվողական տեխնիկայի եւ կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի մեծ մասնագետ, ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Որպես Խորհրդային Հայաստանի Մինիստրների սովետի նախագահ (վարչապետ) նա մեծ դեր է ունեցել մեր հանրապետությունում վերոհիշյալ բնագավառի զարգացման, համապատասխան մասնագետների պատրաստման, բազային մի ամբողջ շարք հիմնարկների ստեղծման գործում: Ֆադեյ Տաճատիչը (շրջապատում այսպես էին սիրում նրան կոչել) իր կազմակերպական գործունեությունը շարունակել է նաեւ Հայաստանի անկախ պետականության պայմաններում, ավելի քան մեկ տասնամյակ գլխավորելով Գիտությունների ազգային ակադեմիան:

Պետական նշանավոր գործչի եւ գիտնականի մահվան կապակցությամբ հանգուցյալի հարազատներին եւ գործընկերներին ցավակցական ուղերձ են հղել ՀՀ նախագահը, կառավարությունը, ԳԱԱ-ի նախագահությունը, Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը եւ ուրիշներ:

ՍԱՐԴԸ ԼԵԳԵՆԴԱՐ ԿՉՆՈՒՄՑԻՑ

ՉՈՐԻ ԲՍԼՍՅԱՆ

Կյանքից հեռացավ մեր ժամանակակիցը, որի անվան հետ կապված են մեր հայրենիքի իրական առաջընթացը, իրական զարգացման ու բարգավաճման երկար տարիները: Նա կանավոր էր, Հայրենական մեծ պատերազմի ճակատային զինվոր, զեներալ, գիտական հետազոտող, գիտնական, գիտության եւ արտադրության կազմակերպիչ, ականավոր պետական գործիչ, մեծ հայրենասեր, օրինավոր մարդ:

Ֆադեյ Տաճատի Սարգսյանին ես վերջին անգամ տեսել էի Ռուս-հայկական համալսարանի հանդիսատեսում, որտեղ նրան մեծարում էին իր ութսունհինգամյակին նվիրված գիտական կոնֆերանսում: Այնտեղ ես հանդես եկա, ինչպես



Վահիկ Քաղապարյան

ասվում է, զեկուցման թեզիսներով: Եվ այսօր ուզում եմ խոսքս հասցեագրել նախ եւ առաջ երիտասարդությանը, որը, ավա՛ղ, քիչ գիտի մեր ապագայի համար այնքան շատ բան արած մարդու մասին: Ես կարծում եմ, նման մարդկանց հիշատակը պետք է լինի ներգործուն, հեռանկարին միտված: Դա շատ կարեւոր է հենց այսօրվա երիտասարդության համար, հետեւաբար՝ ապագայի համար:

1988 թվականի մարտի 2: Երեւանում ոչ ոք ոչինչ չգիտեր Սումգայիթի մասին: Յնարավոր է, կային մարդիկ, որոնց նախօրեին Բաքվից ու մերձակայքից զանգել էին ազգականներն ու պատմել կատարված անասելի ողբերգության մասին: Վաղ առավոտյան ինձ զանգեցին Յայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի ընդունարանից եւ ժամը տասին հրավիրեցին նրա առանձնասենյակ: Երբ մտա ընդունարան, արդեն այնտեղ էին Սիլվա Կապուտիկյանը, Իգոր Մուրադյանը եւ Լիլի մի քանի մարդ:

Մեկ րոպե անց մեզ հրավիրեցին Դեմիրճյանի աշխատասենյակ: Երկար սեղանի շուրջը նստած էին ութ մարդ: Կենտրոնում քաղբյուրոյի անդամության թեկնածու Վլադիմիր Դուզիխն էր: Նրա մի կողքին նստած էր Կարեն Դեմիրճյանը, մյուսին՝ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Անատոլի Լուկյանովը: Մենք բոլորս տեղավորվեցինք նրանց դիմաց: Ոչ մեծ դադարից հետո Դուզիխը ոտքի կանգնեց եւ միանգամից նետեց.

- Դե ինչ: Սա՞ էիք ուզում...

Ապա պատմեց, թե ինչ էր պատահել Սումգայիթում, բերելով թվեր եւ նկարագրելով հայերի դեմ չարագործությունների մղծավանջային պատկերներ:

Մենք բոլորս, ասես պայմանավորված, միանման արձագանքեցինք էությանը այդքան հրեշավոր «Սա՞ էիք ուզում» հարցին: Ոչ Դուզիխը, ոչ նրա մոսկովյան թիմը ամենայն հավանականությամբ չգիտեին, որ նորմալ պետության մեջ անհմաստ է «ուզենալ» սեփական ժողովրդի ցեղասպանությունը օրը ցերեկով: Թեեւ մեզ համար ոչ մի զարմանալի բան չկար ո՛չ հայերի զանգվածային սպանությունների ու նրանց տների հրդեհման, ո՛չ էլ խմբովին բռնաբարությունների մեջ: Պատահական չէր, որ կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարի աշխատասենյակում հնչեց մեր ժողովրդի համար գործածական «թուրքը մնում է թուրք» արտահայտությունը, ինչին Սիլվան հավելեց, թե սումգայիթյան բարբարոսության բուն փաստը խոսում է այն մասին, որ դարաբաղցիները պարզապես դատապարտված էին սկսելու պայքարը հանուն իրենց ապագայի: Իգորն ամեն ինչում մեղադրեց Ռուսաստանին, որը, կամխատեսելով դժբախտությունը, վաղուց պետք է ՌԽՖՍՀ-ի կազմի մեջ առներ Լեռնային Դարաբաղի Ինքնավար Մարզը: Մի՞թե մեզ բոլորիս քիչ էր Նախիջեւանի ողբերգական ճակատագիրը: Այդ պահին ես ինձ անընդհատ բռնեցնում էի մեկ մարդու մասին մտածելիս. Ֆադեյ Սարգսյանի: Եվ գիտակցում էի, որ դրա մեջ ուրույն կենսական տրամաբանություն կար:

Դժվար չէր գուշակել, որ այն ամենից հետո, ինչ տեղի ունեցավ Սումգայիթում, այնտեղ այլևս հայեր չեն մնա: Դա նշանակում էր, որ մեկ-երկու օր անց փախստականների

բազմահազարանոց հոսքը լցվելու է Երեւան: Եվ ինքս ինձ տալիս էի մեր սերնդի համար անսովոր հարցը. «Արդյոք պատրաստ եմք մենք ընդունելու հազարավոր ու հազարավոր դժբախտների եւ անօթեւանների: Չէ՞ որ դա ոչ մեկ օրով է, ոչ երկու: Այստեղ կառավարության, պետության ձեռքի կարիքը կա: Եվ հենց դուրս եկանք Դեմիրճյանի աշխատասենյակից, ես զանգեցի Ֆադեյ Սարգսյանին: Պայմանավորվեցինք հանդիպել:

Երկու ժամ անց Սոս Սարգսյանի եւ Սարգիս Մուրադյանի հետ արդեն Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի աշխատասենյակում էինք: Խոսակցությունն այն մասին էր, որ անհրաժեշտ է Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններից տեղ հասցնել մոտ հարյուր ֆիննական փայտե տնակներ:

Պետք էր ծանոթ լինել Ֆադեյ Տաճատովիչի էությանն ու բնավորությանը: Որսալով նախաձեռնության կարելությունը, նա իսկույն ձեռքը մեկնեց բարձր հաճախակալության հեռախոսին, որը համամիութենական կառավարական կապի պարտադիր միջոց էր: Շուտով սիբիրյան ու բելոռուսական ճանապարհներին էին արցախյան մի քանի պատվիրակություններ: Մեր աչքերի առջև Ստեփանակերտում հայտնվեց «Սումգայիթյան քաղաքը»: Շինարարությունը գլխավորում էր Ստեփանակերտի քաղաքապետ Մաքսիմ Միրզոյանը: Բայց մինչ այդ պետք էր ահավոր վիշտ վերապրած մեր դժբախտ հայրենակիցներին դիմավորել Երեւանում եւ տեղավորել: Փող էր անհրաժեշտ: Այդ հարցը միայն կառավարական մակարդակով չէր կարելի լուծել հենց թեկուզ այն պատճառով, որ Կրեմլը նույնիսկ ցավակցություն չհայտնեց Սումգայիթի զոհերի հարազատներին ու բարեկամներին: Եվ մենք Սոսի ու Սարգիսի հետ մեկնեցինք Եջմիածին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մոտ: Չէինք հասցրել ներկայացնել խնդրի էությունը, երբ կաթողիկոսն աչքերը կկոցելով մեղմ ժպտաց եւ ասաց, որ մինչ մենք ճանապարհին էինք, Ֆադեյ Սարգսյանը հասցրել էր զանգել իրեն:

Երկու օր անց Մինիստրների խորհրդի նախագահը մեզ հրավիրեց իր մոտ: Պատմեց, որ զանգել է Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահ Գ. Սեյդովը եւ գործընկերոջ իրավունքով ցավակցություն հայտնել Սումգայիթում հայկական ջարդի կապակցությամբ: Աստժո անունով երդվել է, թե սգում է ողջ Ադրբեջանը, եւ որ ինքն անձամբ պատրաստ է գալ մեզ մոտ ու ծնկաչոք ներում հայցել հայ ժողովրդից: Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Մարիուս Յուզբաշյանի տեղեկություններով՝ Բաքվում տազնապած էին: Դեկավարությունը վախենում էր պատժից, ընդհուպ Արցախը Հայաստանին հանձնելը: Սակայն Ֆադեյ Սարգսյանը չհավատաց իր ադրբեջանցի գործընկերոջ եւ ոչ մի խոսքին: Բացի ամենայնից, նա շատ լավ գիտեր ԽՍՀՄ-ի այն ժամանակվա ղեկավարներին եւ առաջին հերթին Գորբաչովին ու Լիգաչովին, որոնք սումգայիթյան ցեղասպանություն հասկացությունն իջեցրին մինչեւ սովորական խուլիզանության փաստի:

Այդ ողբերգական օրերին ես համարյա ամեն օր այցելում էի Մինիստրի ճախագահին: Նրա պատուհանում

լույսը գիշերն էլ չէր մարում: Նրա կողքին միշտ կարելի էր տեսնել իր առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանին, առանց որի եռանդուն գործունեության դժվար էր պատկերացնել սունգայիթյան դժոխքի միջով անցած մեր հայրենակիցների ընդունման եւ տեղավորման գործուն կազմակերպչական աշխատանքը:

Պետք է հաշվի առնել, որ Ստեփանակերտում սունգայիթյան քաղաքի շինարարությունն ընթանում էր արդեն սկսած պատերազմի խորապատկերին, որ մեզ էր պարտագրել Բաքուն: Եվ Մոսկվայում ու Երեւանում տեղի ունեցող կուսակցական եւ կառավարական բոլոր հանդիպումներին ամենակտիվ մասնակցություն էր հանդես բերում Ֆադեյ Տաճատովիչը, որին Գորբաչովը մեղադրում էր «Ղարաբաղ» կոմիտեին եռանդուն աջակցելու մեջ:

... Ֆադեյ Սարգսյանի կազմակերպչական տաղանդը եւ շփման անսովոր ունակությունը անգնահատելի էին հատկապես սպիտակյան երկրաշարժի առաջին օրերին: Այդ մասին չէր կարող չիմանալ Գորբաչովը թեկուզ այն պատճառով, որ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովը, որն աղետի գոտում ներկայացնում էր ԽՍՀՄ Կենտկոմի քաղբյուրոն, լավ գիտեր իր գործընկերոջ բարձր հեղինակության մասին ոչ միայն Չայաստանում, գիտեր նրա գործնական կարողությունների մասին, որոնք այնքան կարելու էին արտակարգ իրավիճակներում: Սակայն այդ ժամանակ Գորբաչովին շատ ավելի հուզում էր իրավիճակը Ղարաբաղում: Եվ հենց այստեղ էր, որ ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղարին ձեռք չէր տալիս Ֆադեյ Սարգսյանը: Ղարաբաղի տեղի մասին իր դիրքորոշմամբ: Բացի ամենայնից, ԽՍՀՄ առաջնորդին իր համար անսպասելիորեն գլխացավանք դարձած Չայաստանում անհրաժեշտ էր սեփական մարդ ունենալ: Եվ ահա որոշեց բազմափորձ պետական գործչին, արտադրության բազմաթիվ ճյուղերի կազմակերպչին փոխարինել իր ստավրոպոլյան ծառայակցով, որը բնականաբար ծանոթ չէր Չայաստանի տնտեսությանը, կադրերին, առանձնահատկությանը: Դա տեղի ունեցավ սպիտակյան երկրաշարժից բառացիորեն մեկ ամիս անց: Երկրաշարժ, որի հետեւանքով զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, լիովին կամ մասամբ տանիքից զրկվեց մոտ մեկ միլիոնը: Դժվար թե այսօր որեւէ մեկն իմանա, թե ինչու Գորբաչովը Չայաստանի Մինիստրների խորհրդի նախագահի հետագա ճակատագրի հարցը բարձրացրեց հենց 1989 թվականի հունվարի 10-ին: Գորբաչովը պատրաստվում էր մեկ օր անց հրամանագիր ստորագրել Ղարաբաղում Չատուկ կառավարման կոմիտե ստեղծելու մասին Արկադի Վոլսկու գլխավորությամբ եւ նրան պետք էր ամենաբարձր մակարդակով, երկու հանրապետությունների ներկայացուցիչների ներկայությամբ կազմակերպել հերթական թատերախաղը, որի ժամանակ սպառնաց Ղարաբաղի խնդիրը լուծել հին կադրերին նորերով փոխարինելով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իմ ձեռքն ընկավ քաղբյուրոյի այդ նիստի արձանագրության աշխատանքային սղագրությունը: Այնտեղ անընդհատ կարելի է հանդիպել նախադատությունների տեղերում կադրային փոփոխությունների մասին: Միաժամանակ

Գորբաչովն անպայման ավելացնում էր. «Մենք ձեզ կօգնենք»:

Այդ մարդն իրոք ենթադրում էր, թե «սունգայիթից» հետո կարելի էր այդքան բարդ հարցը լուծել «թարմ ուժերով»: Նա այդպես էլ ասում էր. «Անհրաժեշտ է ներգրավել թարմ ուժեր, որոնք ցավում են ժողովրդի համար եւ կգործեն «Ղարաբաղ» կոմիտեի դեմ...»: Արկադի Վոլսկին Ստեփանակերտում ինձ պատմեց, որ քաղբյուրոյի նիստին Նիկոլայ Ռիժկովը, տեղյակ լինելով Սարգսյանի կազմակերպչական մեծ կարողությունների մասին եւ հաշվի առնելով Չայաստանում ստեղծված ողբերգական իրավիճակը, խորհուրդ էր տվել այնուամենայնիվ չչտապել իր հայ գործընկերոջ ազատման գործում: Բայց ո՞չ: Չափից շատ «մեղքեր» էր գործել Ֆադեյ Սարգսյանը: Մերք նա չափազանց ակտիվորեն էր զբաղվել Սունգայիթի զոհերի ճակատագրով, մերթ չափազանց հաճախ ու հայրաբար էր հանդիպել Ղարաբաղյան շարժման առաջնորդների հետ, մերթ էլ գլխավորել Արցախին մարդասիրական օգնություն հասցնող անվերջանալի շարասյունը: Եվ դա այն դեպքում, երբ պարտավոր էր կանխել «սադրանքները»: Նրան մեղադրում էին եւ այն բանում, որ հաճախ էր խորհրդակցում իր նախկին առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանի հետ, որը հայտնի էր որպես մոլի ազգայնական:

Այն օրերին, երբ Ֆադեյ Տաճատովիչը հայտնվեց հալածանքի մեջ, նրա հեղինակությունն ավելի աճեց: Վոլսկին պատմում էր, որ Գորբաչովն անթաքույց անհանգստացած էր, թե նախկին առաջին մինիստրը, հայտնվելով մերժվածների շարքում, մի որեւէ վտանգավոր հայտարարություն կանի: Ինչպես պարզվում է, աշխարհի մեծագույն տերության առաջնորդը պարզապես ոչինչ չգիտեր միութենական մի ամբողջ հանրապետության բազմամյա ղեկավարի մասին: Չգիտեր, որ Ֆադեյ Սարգսյանն իր անունը ժառանգել է պապից, որը Նախիջեւանի Կոնուտ լեգեմար գյուղի հոգեւորականն էր: Կրեմլում չգիտեին նաեւ, որ նրա պապ Թադեոսը (Ֆադեյ) հայ մեծ գորավար եւ փիլիսոփա Գարեգին Նժդեհի մերձավոր ազգականն էր: Չգիտեին: Չակառակ դեպքում նրանց մտքով էլ չէր անցնի, թե Ֆադեյ Սարգսյանը երբեւէ կարող է «աբիժնիկի» հանդերձներ հագնել: Ինչպիսի՞ ողորմելի բառ: Չէր կարող այդպիսին լինել գեներալ Սարգսյանը ոչ միայն որպես հայ հոգեւորականի թոռ եւ Գարեգին Նժդեհի ծոռնակից զարմիկ, այլեւ որպես անհատ, որն ինքն էր կերտել իր կերպարը: Գերազանցության դիպլոմով ավարտել էր ռազմական ակադեմիան: Գորբաչովը կոմերիտական կուսակցության կյանքում նոր-նոր հաստատվում էր, երբ Սարգսյանը ղեկավար պաշտոններ էր զբաղեցնում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության իրետանա-իրթիռային գլխավոր վարչությունում: Ողջ կյանքում իրեն համարել է պրոֆեսիոնալ զինվորական: Կոչումով գեներալ-մայոր է: Կրեմլում հավանաբար չգիտեին, որ գեներալները չեն կարող խղճալի նեղացկոտների վերածվել: Ինչպես եւ չգիտեին, որ նա երբեք չէր երազել խորհրդային չինովնիկի պաշտոնի մասին: Բավական է հիշել, որ նա հարյուրավոր գիտական աշխատություններ ուներ, որ Երեւանի մաթեմատիկական գիտությունների ԳՀԻ-ի տնօրենն էր: Եվ

թերևս ամենագլխավորն այն է, որ նա տեխնիկական գիտությունների դոկտոր է, ակադեմիկոս, ԽՍՀՄ-ում առաջին հաշվիչ մեքենայի ստեղծողներից մեկը:

... Երբ հայտնի դարձավ, որ Ֆադեյ Սարգսյանը սեփական ձեռքով դիմում է գրել զբաղեցրած պաշտոնից ազատվելու մասին, միամիտ Յենրիխ Իգիթյանը տարակուսանք հայտնեց, իբր ինչպե՞ս կարելի էր երկրի համար այսքան ծանր ժամանակներում հրաժարական տալ: Այդ լուրը հասավ նաև Ֆադեյ Սարգսյանին, որը լայն ժպտաց եւ զուտ ֆադեյական ձեռով ասաց, «որովհետև Յենրիխ Իգիթյանը իմ լավ բարեկամն է»: Տարիներ անց Սարգսյանն այդ դրվագի մասին կհիշատակի իր «Կյանքի դասեր» գրքում: Յենրիխն ավր այն ժամանակ չգիտեր ամենագլխավորի մասին: Այն մասին, թե ինչպես էին Ֆադեյ Սարգսյանին այն ժամանակ, ըստ էության, հայտարարել անցանկալի անձնավորություն: Ինչպես չգիտեր եւ այն, որ երբ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ, իմաստուն ու բարի Նիկոլայ Ռիժկովը մի քանի անգամ առաջարկել էր նախկին գործընկերոջը օգնել աշխատանքի տեղավորելու հարցում, միայն մերժում էր ստացել: Մերժում Ֆադեյին բնորոշ երախտագիտությանը: Այդպիսին է այդ մարդը լեգենդար Կզնուտից:

Իրանահայ համայնք

Իրան-Հայաստան տնտեսական հեռանկարներ

Իրան-Հայաստան Բարեկամության Միության և Հայաստանի Հայ-Իրանական Համագործակցության Ընկերության ջանքերի շնորհիվ համատեղ նիստեր են տեղի ունեցել հայ և Իրանցի առևտրականների միջև, որոնք քննարկել են համատեղ համագործակցությունների և համաժողովներ ու ցուցահանդեսներ անցկացնելու մասին: Այս կապակցությամբ փետրվարի 9-10 տեղի կունենա «Իրանի և Հայաստանի տնտեսական համագործակցությունների հեռանկարներ» երկօրյա սեմինարը, որին կմասնակցեն ավելի քան 10 հայ նախարարներ և 40 հայ գործարարներ, առևտրականներ ու տարբեր ընկերությունների տնօրեններ: Այս համագումարին կմասնակցեն ավելի քան 600 Իրանցի առևտրականներ, գործարարներ ու տարբեր ընկերությունների տնօրեններ: Խենիմարի կայացմանը նպաստում են Իրան-Հայաստան Բարեկամության Ընկերությունը, Թեհրանի Քաղաքապետարանը և Իրան-Հայաստան Առևտրական Պալատը:

Ծառատունկի ծրագիր Հայաստանի գյուղերում

2010 թվականի փետրվարի 2-ին Իրան -Հայաստան Բարեկամության Միության (ԻՀԲՄ) նախաձեռնությամբ տեղի ունեցավ խորհրդակցական համաժողով, որին մասնակցում էին Թեհրանի մի շարք հայկական միությունների ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում ԻՀԲՄ-ն ներկայացրեց Հայաստանի և Արցախի ծառատունկի ծրագիրը: Այս հավաքի հիմնական նպատակն էր բոլոր մարզամշակութային միությունների, ԹՀԹ-ի Առաջնորդ Տ.

Մերուհ Արք. Սարգսյանի օժանդակությամբ, Թեհրանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի ու հավաքել հնարավորինս շատ գումար, Հայաստանի ու Արցախի տարբեր տարածքաշրջանների համար պտղատու տնկիներ գնելու ու տեղափոխելու: Յուրաքանչյուր տնկիի գինը, իր տրանսպորտային ծախսերի հետ, միջին հաշվով կազմելու է 3000 թուման: Մեծ հավանականությամբ Թեհրանի քաղաքապետարանը նույնպես կօժանդակի այս մարդասիրական աշխատանքին. հնարավոր է նաև, որ ոչ հայկական շրջանակներն էլ իրենց օժանդակությունը ցուցաբերեն:

Այս տարվա համար նախատեսվում է, հնարավորինս շուտ այս աշխատանքը կազմակերպվի, որպեսզի ժամանակին տնկիները գնվեն և ուղարկվեն Հայաստան ու Արցախ, որտեղ պետք է բաժանվեն գյուղացիներին: Հետագայում ԻՀԲՄ-ն նպատակադրել է այն դարձնել երկարատև ծրագիր, որի ընթացքում, մեծ հավանականությամբ, Հայաստանում նախապատրաստվի մի տարածք, որտեղ կպատրաստվեն պտղատու տնկիներ: Այս գործում իր ուրույն դերն է ունենալու Իրանահայ ազգային ու հասարակական գործիչ, բարերար պրն. Լևոն Ահարոնյանը:

Հրավիրում ենք բոլոր իրանահայերին, որ իրենց մասնակցությունը ցուցաբերեն այս ազգամկեր գործին՝ թեկուզ մեկ տնկիով, որը արժե 3000 թուման: Մեր համայնքի յուրաքանչյուր անդամ կարող է իր օժանդակությունը ցուցաբերել Հայաստանի և Արցախի գյուղացու կենսամակարդակը բարձրացնելու և Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստելու գործին:

Հայտարարություն

Սիրելի հայրենակիցներ,

Իրան Հայաստան բարեկամության միությունը ձեռնարկել է ծառատունկի ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության տարածքում: Այդ գործում մեզ հետ համագործակցում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը: Դիմելով Ձեզ խնդրում ենք բուռն մասնակցություն ցուցաբերել այդ հույժ կարևոր աշխատանքում: Պտղատու ծառերի տնկիները միջին հաշվով տեղափոխման և այլ ծախսերը նեռայալ արժենալու են յուրաքանչյուրը 3000 թուման: Հայ կամ պարսիկ բոլոր իրանցի անհատները, միությունները, հասարակական կառույցները, ընկերությունները կամ ձեռնարկությունները մասնակցելով այս նախաձեռնությանը կարող են նվիրել ցանկացած թվով տնկին համարժեք գումար: Նվիրատուները կարող են դիմել Իրան Հայաստան բարեկամության միության գրասենյակ հետևյալ հեռախոսահամարներով:

88841177, 88831466, 88841678, 88830771

Իրան Հայաստան բարեկամության միություն

15-րդ Պատգամավորական Ժողովից

Սույն թվի դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ ԹՀԹ-ի Պատգամավորական Ժողովի 15-րդ նիստը, որի ժամանակ ԹԽ-ն իր զեկույցում անդրարարձավ համայնքային տարբեր խնդիրներին: Նշենք դրանցից մի քանիսը: Ըստ ԹԽ-ի զեկույցի՝ Կրթական խորհուրդը պետք է ուսումնասիրություն կատարի և պարզի, թե դպրոցներում ինչ մակարդակի վրա է կրոնական և

ազգային դաստիարակությունը: Նշվեց, որ մեծ հավանականությամբ կրոնականը կգերակշռի, քանի որ այդ են վկայում մեծ քանակությամբ արված տպագրությունները, որ տրվում են աշակերտությանը և անցկացվող բոլոր կրոնական մրցությունները:

Մեր դպրոցների հայոց լեզվի դասագրքերի մասին

Փորձ է կատարվել և հայտնաբերվել է այն փաստը, որ մեր դպրոցների հայոց լեզվի դասագրքերի բովանդակությունը բարդ և անհասկանալի է և չի համապատասխանում երկրի վիճակին ու ժամանակակից աշխարհին: Կան որոշ բարդ հարցեր դասագրքերում, որ բարձր մակարդակի հայերեն իմանալու անհրաժեշտությունն է պահանջում, ինչը չի համապատասխանում մեր իրականությանը: Մեր կրթական խորհուրդները դեռ որևէ տեսակետ այդ կապակցությամբ չեն հայտնել: Եթե հայտնել են, թող քննարկման դնեն համայնքի մասշտաբով, թող Կրթական խորհրդի հարգելի նախագահ պրն. Զրայր Շահնազարյանը այս կապակցությամբ տեսակետ հայտնի:

Մեր դպրոցների բուՖեները

Մեր բուՖեների գերխնդիրը կարծես նյութական շահի ապահովումն է, որ թեմական և Կրթական խորհուրդները պահանջում են բուՖե կառավարող ծնողներից: Նրանք էլ ամեն գնով աշխատում են էժան ապրանքներ օգտվելով դպրոցական երեխաներից շահույթ ստանալ: Զարց է առաջանում, թե արդյոք դա համապատասխանում է մեր սկզբունքներին: ԲուՖեներում մեծ մասամբ տրամադրվում են երշիկ և նրբերշիկներ:

Շայաստանում գնված հողակտորի ձևկատագիրը

Ինչպես մեր համայնքը տեղյակ է, շուրջ երկու տարի առաջ թեմական խորհուրդը Շայաստանի Աբովյան քաղաքի մոտակայքում 500.000.000 թուման ներդրում կատարելով գնեց մի հողամաս, որտեղ ծրագրել էր բնակարաններ կառուցի և ցածր գներով տրամադրի իրանահայությանը՝ հատկապես երիտասարդ զույգերին խրախուսի, որ Իրանից արտագաղթողներն ավելի շուտ գնան դեպի Շայաստան:

Թեմական խորհուրդը առաջարկել էր, որ վաճառվի այդ հողամասի կեսը և դրանով շինարարական աշխատանք տարվի: ՊԺ-ի 15-րդ նիստի ժամանակ այս հարցը կրկին քննարկվեց ժողովի կողմից: Տնտեսական հանձնախումբը կարծում էր, որ որևէ ներդրում առայժմ չկատարվի: Նշվեց նաև, որ, եթե թև-ն հարմար է տեսնում վաճառելու հարցը առաջ քաշել, այն քննարկվի ժողովում: Որոշ պատգամավորներ էլ կարծում էին, որ արդեն երկար ժամանակ է անցել այդ հողատարածքի գնումից և որևէ աշխատանք չի կատարվել: Ճիշտ կլինի կրկին այդ հարցը քննարկման ենթարկել կամ էլ, եթե թև-ն որևէ առաջարկ ունի այդ կապակցությամբ ասի, ապա ժողովում քննարկումներ արվի:

Թև-ն մեկ միլիարդ բաց է ներկայացրել

Թեմական խորհուրդը իր ներկայացրած նախահաշվի մեջ մեկ միլիարդ թուման բաց է ներկայացրել: Պարզվեց

նաև, որ Թև-ն բանկում պահ դրված գումարից օգտագործել է, իսկ պատգամավորները այս հարցի մասին տեղյակ չէին: Զարց առաջացավ, թե արդյոք Թև-ն կարող է առանց ՊԺ-ի հաստատման օգտագործել պահ դրված գումարից, թե՞ ոչ: Թեմական խորհուրդը չկարողացավ առայժմ պատասխանել, թե պահ դրված հաշվից ինչքան գումար է հանել և օգտվել:

Նարմաքի Բնակարանաշինության հարցը ավելի քան 10 տարի դեռ ուսումնասիրվում է

Թեհրանի հայահոծ Նարմաք թաղամասում շուրջ 10 տարի առաջ առաջարկ եղավ և որոշում ներկայացվեց, որ Սուլթան Ամիրյանի կտակած հողատարածքի վրա նոր ամուսնացած հայ երիտասարդ զույգերի համար կառուցվի փոքր բնակարաններ և հարմար գներով նրանց վաճառվի կամ վարձու տրվի: ՊԺ-ի տարբեր նիստերում այդ հարցը քննարկվել է, տարբեր թեմական խորհուրդներ այդ որոշումը հետաձգել են մինչև հասել է այս շրջանին և կրկին ՊԺ-ի 15-րդ նիստի ժամանակ պատգամավորներից անդրադարձան այդ հարցին, ասացին, որ այս ծրագրի մասին անգամներ տարբեր բեմերից խոսվել է և նույնիսկ ԻԻՅ հայ պատգամավորն է անդրադարձել այս հարցին, թեմական խորհուրդները նաև անգամներ զեկույցներ են ներկայացրել այդ կապակցությամբ և հիմա ինչ-որ ձևով փորձեր է արվում կրկին դադարեցնել այս ծրագիրը և սա շատ վատ տպավորություն է թողնում մեր համայնքի անդամների վրա: Թեմական խորհրդի նախագահ դկտ. Աիդա Զովհաննիսյանը ասաց, որ իրենք չեն ասում դադարեցրել են, սակայն առայժմ հնարավոր չէ դա անել և ներկա պայմաններում ուսումնասիրում են լավագույն տարբերակը, այսինքն, բացի բնակարանաշինությունից, կարելի է ուրիշ տարբերակներ լինեն, պարզապես հնարավորությունների խնդիր կա այստեղ: Այս 10 տարին կարծես բավարար չի եղել այդ ուսումնասիրությունները ավարտին հասցնելու համար և դեռ պետք է շարունակվեն ուսումնասիրությունները:

Բուժարանի «ելք ու մուտքը» Թև-ի հաշվետվության մեջ չկա

Անգամներ տարբեր թեմական խորհրդների նյութական հաշվետվությունների ժամանակ «Ավետիսյան» հայոց բուժարանի հաշվետվությունը կամ չի ներկայացվել կամ էլ անբավարար է ներկայացվել: Վերջին հաշվետվության մեջ նույնպես չկար այն, որի համար ՊԺ-ն պատգամավորների քննադատմանը արժանացավ: Պատգամավորները բուժարանի մասին միշտ ունեցել են տարբեր տրամաբանական քննադատություններ, սակայն երբեք այդ քննադատությունները իրենց ազդեցությունը չեն ունեցել թեմական խորհրդների և բուժարանի խնամակալ մարմնի վրա: Մինչև այն ժամանակ, որ պրն. Զանրի Քոչարյանն էր խնամակալ մարմնի նախագահ, ոչ ոք չէր համարձակվում որևէ քննադատություն անել կամ հաշվետվություն պահանջել նրանից և այն տպավորությունն էր թողնում, որ կարծես դա իր սեփական դաշտն է և ներքին որոշում կա, որ պետք է նրան ազատ թողնել իր գործելակերպում: Դժբախտաբար, նույն ոճը ինչ- որ ձևով շարունակվում է դեռ և միշտ էլ այն պատգամավորների քննադատությանն է արժանացել:

Իրան

ԹԵՐԱՆ-ԵՐԵՎԱՆ ԶՎԵՐԹԻ ԱՎԻԱԿԹԱՐԻ ԶՈՐԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՓՈԽՐԱՏՈՒՑՈՒՄ ԵՆ ՍՏԱՅԵԼ

ԹԵՐԱՆ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԶԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ: Թեհրան-երեւան չվերթի ավիափաթարի զոհերի ընտանիքները փոխհատուցում են ստացել «Կասպյան էյրլայն» ընկերությունից: Ինչպես հաղորդում է «Ազդակը», յուրաքանչյուր ընտանիքի վճարվել է 54 հազար ամերիկյան դոլար:

Օդանավի սեւ արկղերի քննությունը Իրանում շարունակվում է: Վերծանման աշխատանքներին մասնակցում են Իրանի, Չայաստանի ու Միջպետական ավիացիոն կոմիտեի մասնագետները: Քննությամբ պարզվել է, որ օդանավի շարժիչը խափանվել է թռիչքի պահին, սակայն պատճառը դեռեւս հայտնի չէ:

Շայաստան

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԸ ԿՎԵՐԱՄՎԻ ԳՐԱՎՈՐԻ

Ռուս-հայկական սլավոնական համալսարանի կիրառական մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան **Վլադիմիր Եղիազարյանը** «Նյուզ.ամ»-ին տված հարցազրույցում նշել է, որ Հայաստանում ստեղծվում է համակարգչային ծրագիր, որով բանավոր խոսքը կվերածվի գրավորի: Եղիազարյանը նշել է, որ այս ծրագիրը լայն կիրառություն կգտնի հատկապես բանավոր խոսքի սղագրությամբ զբաղվող մասնագետների, ինչպես նաեւ սահմանափակ կարողություններով մարդկանց մեջ:

Ծրագրավորող խմբի հետազոտողներից Հարություն Գասպարյանը «Նյուզ.ամ»-ին հայտնել է, որ համակարգչային ծրագրում ձայնի տեմբրի տարբերակման համար թեստային համակարգ է օգտագործվում: «Առաջարկում ենք արտասանել մի քանի նախադասություններ, որից հետո ծրագիրն արդեն ճանաչում է «տիրոջ» ձայնը», նշել է Գասպարյանը:

Նշված համակարգչային ծրագիրն իրականացնելու է երեք ֆունկցիա. նախ հայերեն բանավոր խոսքով դեկավարելու է Word ծրագիրը, հետո բանավոր խոսքը վերածելու է տեքստի եւ վերջում իրականացնելու է արդեն հավաքված տեքստի ձայնային վերարտադրություն:

Միջազգային

ԵՐԵՎ ՏԱՐԻ ԱՈԱԶ ՄՊԱՆՎԵՑ ԸՐԱՆՏ ԴԻՆԸ

Հրանտ Դինքի սպանությունից երեք տարի անց ոճրագործները դեռ պատժված չեն, իսկ դատավարությունն անվերջ ձգձգվում է: Եվ թեպետ մշտապես հունվարի 19-ին Հրանտ Դինքի սպանության

օրը, «Ակօսի» խմբագրատան առջև կազմակերպվում են բողոքի ցույցեր, իսկ հերթական դատական նիստն ուղեկցվում է երթերով, թուրքական «արդարադատությունը» չի շտապում որոշում կայացնել: 2007 թվականին օրը ցերեկով «Ակօսի» խմբագրատան առջև սպանվեց Հրանտ Դինքը: 32 ժամ անց ձերբակալվեց Օգյուն Սամաստը, որն ընդամենը 17 տարեկան էր: Վերջինս խստովանեց, որ Հրանտ Դինքի հողավածներից վրոգված Տրապիզոնից Ստամբուլ էր եկել լրագրողին սպանելու հստակ մտադրությամբ: Սակայն առաջին իսկ դատավարության ընթացքում Օգյուն Սամաստը հրաժարվել էր պատասխանել հարցերին: Ձերբակալությունից անմիջապես հետո թուրքական եւ միջազգային մամուլում հայտնվեց մի լուսանկար, ուր ոստիկանության աշխատակիցները լուսանկարվել էին Օգյուն Սամաստի հետ՝ թուրքական դրոշի ֆոնին: Սպանության գործով փաստաբան Ֆետիե Չենթինը հայտարարեց, որ սպանությունը կազմակերպված է հրահրված էր թուրքական կառավարության կողմից ազգայնական հողի վրա: Իր վերջին հողվածում Հրանտ Դինքը գրում է. «Համակարգիչս լի է սպառնալիքներով եւ վիրավորանքներով: Ես չգիտեմ, թե որքանով իրական են այդ սպառնալիքները, սակայն անհնարին է ապրել»:



կրելով հոգեբանական այս տանջանքները»: Թուրքական կառավարությունը լրագրողի պաշտպանության համար որեւէ քայլ չձեռնարկեց:

Հրանտ Դինքի սպանության մասին խոսեց ողջ քաղաքակիրթ աշխարհը: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ստիպված էր մի քանի անգամ ասուլիս հրավիրել եւ սպանությունն անվանել ամոթալի: 2007-ին Եվրոմիության գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան նշեց, որ Հրանտ Դինքի սպանությունը դժվարացնում է Թուրքիայի անդամակցության հնարավորությունը Եվրոմիությանը:

Հրանտ Դինքի մահից հետո օրեր շարունակ Ստամբուլի փողոցներում տեղի էին ունենում բազմահազարանոց ցույցեր: «Ես Հրանտ Դինքն եմ», «Մենք հայ ենք» վանկարկում էին հազարավոր թուրքեր: Ստամբուլում հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը 15-օրյա սուգ հայտարարեց:

CNN Turk- ի խմբագիր Թահա Աբյուլը այդ օրերին ասաց. «Կրակոցը Թուրքիայի դեմ էր: Այժմ աշխարհում կարծիք է ձեւավորվել, թե թուրքահայերը երկրում անվտանգ չեն»:

Հրանտ Դինքը 1996 թվականի ապրիլի 5-ին սկսեց «Ակօսի» հրատարակությունը: «Ակօսը» հիմնականում թուրքերեն շաբաթաթերթ է Թուրքիայում, որը պատմում է թուրքահայ համայնքի եւ հայ թուրքական հարաբերությունների մասին: Հրանտ Դինքը խոսում էր Հայոց ցեղասպանության մասին, երկու ժողովուրդների հարաբերությունների մասին: Հրանտ Դինքին մեղադրում

են թրքությունը վիրավորելու մեջ եւ մեղադրում տխրահռչակ 301 հոդվածով: Սակայն մեղադրանքներն ու հետապնդումներն անգոր էին դադարեցնելու Հրանտ Դինքի խոսքը: «Երկխոսությունը միակ ելքն է», հայ թուրքական հարաբերությունների մասին խոսելիս ասել էր Հրանտ Դինքը:

Հրանտ Դինքի մահվան երրորդ տարելիցի առիթով «Ալօսի» խմբագրատան առջեւ էին հավաքվել լրագրողի ընկերները, որոնք նախապես հանդես էին եկել հայտարարությամբ՝ պահանջելով արդար դատավարություն եւ մեկ անգամ եւս հաստատելով իրենց պատրաստակամությունը պայքարելու արդար վճռի համար:

«Ո՛վ է Հրանտի ոճրագործը», հարցնում են Հրանտի ընկերները եւ պատասխանում. «Հրանտը սպանվեց համատեղ գործող «պաշտոնական» կամքի միջոցով, ովքեր համարձակություն չունեն հրապարակավ ներկայանալու»:

ԱՐԵՎԻԿԿ ԲԱՂԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 40 ՄԼՆ ԴՈՒԱՐ՝ ԱՄՆ-ԻՑ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսին է ներկայացրել հաջորդ տարվա ֆինանսական բյուջեն՝ 3.8 տրիլիոն դոլարի չափով: Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (ANCA) հաղորդմամբ նախատեսվում է 2011-ին Հայաստանին հատկացնել 40 մլն դոլար օգնություն: Այն 10 մլն-ով ավելի է 2010-ին Հայաստանին նախատեսվածից, սակայն 1 մլն-ով պակաս Կոնգրեսի հաստատածից:

Զինված ուժերի ֆինանսավորման համար նախատեսված ԱՄՆ օգնությունը նախատեսում է հավասարակշռություն պահպանել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ. յուրաքանչյուր երկրին տրվելու է 3.5 մլն դոլար:

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆՈՂ ԱՌԱՋԻՆ ՇԱՅՆ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Այդ մասին ղեկավարների 1-ի համարում գրել է «Յուրիեթի» հեղինակ Սեֆա Քափլանը: Ահա թե ինչ. «Անունը Լեո Սուրեն է, Հալեպից... Հաջողությամբ հանձնեց Եվրոմիության գլխավոր քարտուղարության փորձագետի քննությունը: Եթե անցկացնի հարցազրույցները նույն հաջողությամբ, ապա կդառնա Թուրքիայի Հանրապետությունում պետական ծառայություն ստանձնող առաջին հայ քաղաքացին: Նա 1981-ին ծնվել է Ստամբուլում, հայկական վարժարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ռոբերտ քոլեջում, այնուհետեւ տեղափոխվել է Հալեպ, ապա վերադարձել եւ զբաղվել է ոսկերչությամբ: Մագիստրատուրան «Եվրոհիմտեզոման քաղաքական տնտեսությունը» թեմայով ավարտել է Լոնդոնի տնտեսական դպրոցում, որտեղ միաժամանակ եղել է Թուրք ուսանողների միության վարչության անդամ:

Շասարակական

Շարցագրույց թիֆլիսահայ ազգային գործիչ Միքայել Ավագյանի հետ

Հարց.- Խնդրում ենք ներկայացնեք Ձեզ.

Պատ.- Միքայել Ավագյանն են, թիֆլիսաբնակ, մի քանի կազմակերպությունների անդամ:

Հարց.- Խնդրում ենք պատմել համառոտ թիֆլիսահայության անցյալից և ներկայից:

Պատ.- Դարեր շարունակ վրաստանում ապրում են հայեր և թիֆլիսահայությունը այստեղ մեծ պատմություն ունի, դա կարելի է բաժանել երկու մասի՝ մինչև Սովետական Միության փլուզումը և դրանից հետո՝ մինչև մեր օրերը: Հայությունը այստեղ շատ մեծ դեմքեր է ունեցել և նրանք մեծ ներդրումներ են ունեցել ոչ միայն հայության համար, այլ ամբողջ Թիֆլիսի և Վրաստանի համար, օրինակ, ՊիտոեՖ, Մանթաշյան, Մելիք Ղազարյան, Արամյան, որն առաջին հիվանդանոցն է կառուցել Թիֆլիսում և այլն: Մանթաշյանը աշխարհով մեկ ճանաչված բարերար է և հովանավորել է մեծ քանակությամբ ուսանողների: Ժամանակին Թիֆլիսում շատ եկեղեցիներ են գործել և մինչ այժմ գործում է հայ պետական դրամատիկական թատրոնը: Սա աշխարհում Հայաստանից դուրս միակ պետական թատրոնն է: Թատրոնը 150 տարվա պատմություն ունի, դերասաններից կարելի է հիշատակել՝ Սիրանուշ, Աղամյան, Փափագյան և շատ ուրիշներ: Թիֆլիսում այժմ աշխատում է երկու հայկական եկեղեցի՝ Ս. Գևորգը և Ս. Էջմիածինը:

Հարց.- Ընդհանուր հայության քանակը ինչքա՞ն է Վրաստանում և Թիֆլիսում:

Պատ.- Վրաստանում ապրում են ընդհանուր թվով 300.000 -ից ավել հայեր, իսկ Թիֆլիս քաղաքում ավելի քան 100 հազար հայ: 20-րդ դարի 80-90 ական թվականներին մեծ քանակությամբ հայեր դուրս են եկել Վրաստանից ու գնացել աշխարհի տարբեր երկրներ, սակայն մի մասը մինչ այժմ դեռ ապրում է Վրաստանում: Թիֆլիսում կա մի հայկական պետական դպրոց, մի օրաթերթ, թատրոն և հասարակական տարբեր կազմակերպություններ:

Հարց.- Պետական դպրոց ասելով, ենթադրվում է, որ պետությունը հովանավորում է այն:

Պատ.- Այո, 7 դպրոցներից երկուսը կիսառուս, կիսավրաց և մյուսները հայկական դպրոցներ են: Պետությունը ամբողջովին հովանավորում է, սակայն ցավով պետք է ասեն, որ աշակերտների քանակը շատ քիչ է:

Հարց.- Ինչո՞ւ է այդպես:

Պատ.- Հայերը գերադասում են իրենց երեխաներին ավելի շուտ ուղարկել վրացական դպրոց, Սովետական տարիներին էլ գերադասում էին ուղարկել ռուսական դպրոց:

Հարց.- Կարող է որակի պատճառով հայերը իրենց երեխաներին չեն ուղարկում հայկական դպրոց:

Պատ.- չէի ասի որակի, այլ կադրերի պակաս ունենք, դասատուների մեծ մասը մեծահասակ են, և այն հայերը, որ գնում են Հայաստանի մանկավարժական ինստիտուտում կրթություն ստանալու, չեն վերադառնում Վրաստան: Ժողովուրդը ասում է՝ ով հայկական դպրոցում է սովորում, իր ապագան Հայաստանում է և պիտի գնա այնտեղ ուսումը շարունակի: Իսկ ով չի ուզում գնալ

Հայաստան, գերադասում է Վրացական կամ ռուսական դպրոցները:

Հարց.- Արդյո՞ք դպրոցներում բոլոր առարկաները հայերեն են անցնում:

Պատ.- Այո աշակերտները բոլոր առարկաները հայերենով են սովորում և Վրացերենը որպես պետական լեզու են սովորում, որպես արտասահմանյան լեզու անցնում են անգլերեն, գերմաներեն և այլն:

Հարց.- Թիֆլիսում քանի՞ հայկական միություններ կան:

Պատ.- 30-ից ավել հասարակական կազմակերպություններ և միություններ գոյություն ունեն այստեղ, սակայն դժբախտաբար 6-7-ն են ավելի կտիվ:

Հարց.- Որո՞նք են այդ ակտիվ միությունները:

Պատ.- Կանանց միությունը, «Շուշանիկ» միությունը, «Մշակույթի կամուրջ» միությունը, Մանկական հիմնադրամը, հայ երիտասարդաց միությունը և հայ գրողների միությունը:

Հարց.- Թիֆլիսում հայկական կուսակցություններ կա՞ն կամ եղել է՞ն անցյալում:

Պատ.- Առայժմ կուսակցություններ չկան, բայց մինչև 20-րդ դարի սիզը՝ մինչև 1920 ական թիվը եղել են հայկական կուսակցություններ, բայց նրանից հետո լեզավ ձևով կուսակցություններ չեն եղել Վրաստանում:

Հարց.- Արդյոք կուսակցությունները իրավունք ունե՞ն աշխատեն:

Պատ.- Ոչ, այստեղ ազգային բնույթի կուսակցություններին չեն զրահնում:

Հարց.- Ինչո՞ւ:

Պատ.- Իրավաբանորեն այնպիսի օրենքներ են որոշեմ, որոնք իրավունք չեն տալիս ազգային բնույթով կուսակցություններ աշխատեն ու գրանցվեն:

Հարց.- Հիմա Վրաստանում ի՞նչ աշխույժ կուսակցություններ կան:

Պատ.- Շատ կուսակցություններ կան, օրինակ, պետականամետ կուսակցություններ և օպոզիցիոն կուսակցություններ և ժամանակին սրանք շատ են փոխվել:

Հարց.- Արդյո՞ք հայերն է մաս են կազմում այդ կուսակցությունների:

Պատ.- Այո հայերը ընդգրկված են տարբեր կուսակցություններում, նույնիսկ տարբեր կուսակցությունների վարչության անդամ են և տարբեր դիրքեր են զբաղում:

Հարց.- Ընդհանրապես վրացիները ինչպե՞ս են վերաբերվում հայերին:

Պատ.- Հարևանական և եղբայրական մոտեցում կա հայերի հանդեպ, որ կողք կողքի են եղել նեղ պայմաններում:

Հարց.- Տնտեսապես հայերի վիճակը ինչպիսի՞ն է:

Պատ.- Թիֆլիսահայերը աշխատում են տարբեր ոլորտներում, բայց համեմատաբար շատ ընդգրկված չեն պետական կառույցներում:

Հարց.- Որևէ արգելք գոյություն ունի՞ այդ կապակցությամբ:

Պատ.- Ոչ, որևէ արգելք չկա, սակայն նրանք այսպես են բացատրում, որ հայերը այնքան էլ չեն տիրապետում պետական լեզվին, որը անհրաժեշտ է պետական աշխատողի համար, իհարկե, այս պրոբլեմը ավելի շուտ գոյություն ունի Վրաստանի շրջաններում և Թիֆլիսի հայերը շատ ավելի լավ են տիրապետում վրացերենին:

Հարց.- Վերջերս լսեցի՞նք, որ հայկական եկեղեցիների նկատմամբ ոտնձգություններ են եղել. ի՞նչ տեղ է հասել այդ խնդիրը:

Պատ.- Օրինական կամ օձիցիալ ձևով ոչ մի կրոնական հաստատություն գրանցված չի այստեղ, այսինքն՝ ոչ հայկական, ոչ մուսուլմանական և ոչ էլ կաթոլիկ և այլը: Ուրեմն ոչ մի եկեղեցի գրանցված չի և այդտեղից է ծագում պրոբլեմները, այդ իսկ պատճառով մենք չենք կարողանում հետ վերցնել այն եկեղեցիները, որոնք փակ են եղել սովետական տարիներին:

Հարց.- Եթե հիմա դիմեք՝ արդյոք կգրանցե՞ն:

Պատ.- Պետությունը հույս է տալիս, որ շուտով կը պատրաստվեն այնպիսի կանոններ, որոնք կրոնական փոքրամասնություններին իրավունք կտան գրանցելու կրոնական հաստատությունները, որոնց վերանորոգման աշխատանքների համար էլ մենք դժվարություններ ունենք:

Հարց.-Արտագաղթի երևույթը գոյություն ունի՞ այստեղ:

Պատ.- Մեծ արտագաղթ եղանակով Սովետական Միության փլուզումից հետո, բայց հիմա ավելի քիչ քանակությամբ, և ոչ թե դեպի Հայաստան, այլ, ավելի շուտ, դեպի Եվրոպա և Ամերիկա, իսկ 80-ական թվականներին շատ արտագաղթեցին Ռուսաստան:

Հարց.- Վրացահայերի կապերը Հայաստանի հետ ինչպիսի՞ն է:

Պատ.- Շատ ամուր են: Կողք կողքի ենք, ինչպես Իրանը և Հայաստանի և գնալ գալն էլ շատ հեշտ է:

Հարց.- Հարաբերությունը մյուս գաղթօջախների հետ ինչպիսի՞ն է:


Պատ.- Կապեր ունենք, հատկապես այն համայնքների հետ, որոնք Վրաստանից են գաղթել: Գնալ գալ կա և տարբեր միջոցառումներ ենք միասին իրականացնում:

Հարց.- Ի՞նչ պատկերացում ունեք իրանահայ համայնքի մասին:

Պատ.- Շատ կարևոր համայնք է և մեծ նշանակություն ունի ազգապահպանության գործում:

Դկտ. Ռ. Սարգսյան-Թբիլիսի

ՄԵՃԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ



Հովանավորությամբ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կրթական համալիրի գլխավոր շենքի նախասրահում վերջերս քողագերծվեց իրանահայ բանաստեղծ/արձակագիր, ճարտարապետ Ռուբեն Հովսեփի Հովհաննիսյանի (գրչանունով՝ Ռ. Բեն) կիսանդրին: Ռուբեն Հովհաննիսյանն իր ամբողջ կարողությունը կտակել է իր ստեղծած Գիտության եւ տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամին՝ ի սատար Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հզորացմանն ու զարգացմանը:

Միջոցառումը համընկնում էր բարերարի մահվան հնգամյակին: Միջոցառումը նախագահում էր ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը: Հանդիսավարն էր ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության բաժնի պետ, գնդապետ Վանիկ Մինասյանը:



Քողազերծումից հետո, Հայաստանի զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Վրթանես Եպս. Աբրահամյանն ու հոգեւոր անձնակազմը մատուցեցին հոգեհանգստյան պատարագ, որից հետո ձայն տրվեց Գիտության և տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամի նախագահ դր. Էդուարդ Պալասանյանին, հավուր պատշաճի ներկայացնելու իր ավագ ընկերոջ կյանքն ու գործունեությունը: Հանդիսության ավարտին հարգանքի և երախտագիտության խոսք ասաց Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետի տեղակալ գնդապետ Մեխակ Հակոբյանը:

Հանդիսությանը ներկա էին բարերարի հարազատները, բարեկամներն ու ընկերները, ինչպես նաև գրականության և արվեստի բազմաթիվ գործիչներ:

Ստորև ներկայացվում է դր.Էդուարդ Պալասանյանի ելույթը:

Ռուբեն Հովհաննիսյան- Ռ. ԲԵՆ

Այսօր
հավաքվել ենք
հարգանքի
տուրք
մատուցելու մի
հայրորդու, որը
ծնվել ու
մեծացել է
Սփյուռքում,
հավիտենապես
տոգորված
հայրենիքի
սիրով և ամբողջ
հոգով նվիրված նրա բարգավաճմանն ու հարատեւմանը:



Ռուբեն Հովսեփի Հովհաննիսյան: Այս ամիս լրացավ նրա հեռանալու հինգերորդ տարին: Նա այլևս ֆիզիկապես մեզ հետ չէ, սակայն այս դահլիճում կան անձինք, ներառյալ ես, որոնք նրան գիտեին տասնյակ տարիներ և որոնք համար նա հեշտությամբ հեռացող չի և չի կարող լինել...

Գրչանունով Ռ. ԲԵՆ, Ռուբեն Հովհաննիսյանը ծնվել է 1916 թվի սեպտեմբերի 17-ին Թեհրանում, այնտեղ ստացել է ճարտարապետի տիտղոս և ամբողջ կյանքում

աշխատել է Իրանի ազգային նավթային ընկերությունում: Նա վախճանվեց 2004 թվի նոյեմբերի 14-ին Թեհրանում:

Ռուբեն Հովհաննիսյանը եղել է հասարակական գործիչ/ակտիվիստ Իրանում՝ հիմնադիր անդամ և առաջին նախագահը Հայ համալսարանականների ընդհանուր միության (1934 թ.), հիմնադիր անդամ Հայ ճարտարապետների և ճարտարագետների միության և բազում համաձայնական, արվեստի և կրթական նախագծերի իրականացման գործընկեր/մասնակից:

Այս բոլորից բացի և հստակորեն առանձին հարկ է նշել հայկական Սփյուռքի մշակութային բացառիկ երեւոյթ՝ «Նոր Էջ» գրական խմբակցության մեջ նրա մասնակցությունն ու նրա հիմնական մղիչ ուժ լինելու հանգամանքը, 1936 թվականից սկսյալ:

Ռուբեն Հովհաննիսյանն իր կյանքի վերջին տարիներին մեծ մասամբ ապրել է հայրենիքում: Այստեղ նա նախաձեռնեց և օժանդակեց մի քանի մշակութային ծրագրերի՝ Երվանդ Քոչարի «Մեւամտություն» քանդակի քառաչափ ծուլածոյի ստեղծում և մատուցում Երեւան մայր քաղաքին, մի շարք գրքերի հրատարակության մեկենասություն, «Նոր դար» պարբերականի հովանավորություն և այլն:

Ռուբեն Հովհաննիսյանի յուրահատուկ և եզակի անհատականությունը բացատրվում է այն հանգամանքով, որ նա իր կյանքի վերջին ամիսներին, քաջ գիտակցելով մեր նորանկախ հայրենիքի մշակույթի ասպարեզում հրատապ կարիքները, արվեստի և գրականության գործիչ լինելով հանդերձ, ամենայն գիտակցությամբ և զգաստությամբ որոշեց իր ամբողջ ունեցվածքը կտակել Հայաստանի զինված ուժերի զարգացմանն ու հզորացմանը: Այդ նպատակով նա Երեւանում հիմնեց «Գիտության և տեխնոլոգիայի զարգացման» հիմնադրամը, որին որպես անձեռնմխելի ֆոնդ կտակեց իր ամբողջ ունեցվածքը՝ մեկ միլիոն ԱՄՆ դոլար:

Շատ է կարելի խոսել Ռուբեն Հովհաննիսյանի անհատականության մասին, սակայն ցանկանում եմ իր իսկ բանաստեղծություններից մի քաղվածք կարդալ, որը ես համադրել եմ Թեհրանում կայացած իր հուշ-երեկոյի առթիվ, 2005 թվականին: Այն, հնարավորություն է ընձեռում իր իսկ խոսքերով մոտիկից ճանաչել այս յուրահատուկ հային՝

ԷՂՈՒՐԴ ՊԱԼԱՍԱՆՅԱՆ

Նկար 1. Ռուբեն Հովսեփի Հովհաննիսյան 1916-2004


Նկար 2. Ռուբեն Հովհաննիսյանի բրոնզե կիսանդրին Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի նախամուտքում, քանդակագործ՝ Աշոտ Կարապետյան

Նկար 3. Աջից՝ Ռուբեն Հովհաննիսյան, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյան, Ամերիկայի հայկական համագումարի նախագահ Հրայր Հովնանյան, Գիտության և տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամի նախագահ Էդուարդ Պալասանյան: Երեւան, սեպտեմբեր 4, 2004 թ.

Մշակույթ

Ճարտարապետ Շերման Վահրամյան

Իտալաբնակ իրանահայ ճարտարապետ, գեղանկարիչ, քանդակագործ եւ OMMEDIZON իրատարակչութեան հիմնադիր ու տարիների խմբագրապետ Շերման Վահրամյանի մահը տեղի ունեցավ 2009 թվականի սեպտեմբերի 27-ին՝ Իտալիայի Միլան քաղաքում՝ երկարատեւ հիվանդությունից հետո: Վահրամյանը ծնվել էր 1939 թ. մայիսի 29-ին՝ Թեհրանում եւ ավարտել էր հայոց Քուշեշ-Դաւթեան տղայոց միջնակարգ դպրոցը՝ 1959 թվականին: 1960 թ. փոխադրվել էր Իտալիա եւ կարճ ժամանակ Զոռնում ապրելուց հետո՝ հաստատվել էր Միլան քաղաքում, որտեղ եւ ուսանել էր Պոլիտեխնիկ համալսարանի ճարտարապետության ճյուղը եւ ավարտելուց յետոյ՝ իսկույն անցել աշխատանքային ասպարեզ: Ակտիվ ու երկարատեւ գործունեություն է ունեցել հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության ուղղությամբ՝ լինելով առաջին մասնակցողներից այն աշխատանքի, որը ձեռնարկեցին մի խումբ իտալացի եւ հայ ճարտարապետներ ու հաստատություններ եւ 30 տարվա ընթացքում զբաղվեցին՝ ի մի բերելու այդ պատմական հուշակոթողների լուսանկարչական, չափագրական եւ դիվանային հսկայածավալ նյութի ուսումնասիրությամբ ու բազմալեզու իրատարակությամբ ու ցուցահանդեսներով արեւմտյան աշխարհին ներկայացնելով հայկական ճարտարապետության դերը՝ Մերձավոր ու Միջին Արեւելքի քրիստոնեա աշխարհում: Documents of armenian architecture ալբոմ-ուսումնասիրությունների շարանը այդ իրատարակչական աշխատանքի ամենացայտուն աշխատանքներից մեկն է, որի գլխավոր խմբագիրն ու համադրողն է հանդիսացել ճարտարապետ Շերման Վահրամյանը: Այդ գիտական բարձրորակ աշխատանքին զուգահեռ՝ Վահրամյանը հիմնադրել է ICOM (Istituto per le culture non dominant) հաստատության, OMMEDIZON իրատարակչության եւ Musicam երաժշտական ձեռնարկութեան (Միւնիխ), որոնց միջոցով մի քանի իտալացի եւ հայ մտավորական բարեկամների հետ կազմակերպում է բազմաթիւ միջազգային գիտաժողովներ, ցուցահանդեսներ, իրատարակություններ եւ համերգաշարեր՝ նպատակակետ ունենալով ուսումնասիրել ժամանակակից հայ արվեստն ու ինքնությունը եւ Մշակույթային փոքրամասնություն գաղափարը, զանազան փոքրամասնությունների մշակոյթի եւ արեւմտի տարատեսակների համեմատական հետազոտություններով, հայապահպանման տասնամեակների զարգույթային-համայնքային կազմակերպչական աշխատանքի արդյունքի մասին քննական բանավեճերով, հասարակական եւ ազգագրական համեմատական ուսումնասիրություններով եւ այլն: 1990-ական թականներից մի կողմ թողեց հայ մտաւոր աշխարհը եւ ամբողջապես նվիրվեց նկարիչ-քանդակագործի, ինչպես նաեւ իտալական մամուլի մասնագետ թղթակցի իր բեղուն ասպարեզին: Երկար տարիների կատարած միջազգային մակարդակով հայկական ուսումնասիրություններն ու ինքնահոգեվերլուծական եզրայանգումները 1990 թականների սկզբում կտակե-ի ձեւով յանձնվեց հայաստանաբնակ գրականագետ Ռուզան Ջաքարեանի գրչին՝ հետագա ուսումնասիրությունների համար: Իր իրատարակչական գործունեության ծիրում խոշոր աշխատանք է տարել նաեւ իր ծննդավայր երկրի՝ Իրանի հարուստ մշակույթը Արեւմուտքին ներկայացնելու ուղղությամբ եւ ժամանակին գնահատվել Իրանի մշակոյթի նախարարութեան կողմից: Վահրամյանին, Իտալիայում ծաւալած իր բազմաբովանդակ մշակութային գործունեության համար, շնորհվել է Իտալիայի պատվավոր քաղաքացի կոչումը: Շերման Վահրամյանի մտավորական բազմակողմանի բացառիկ տաղանդ ունեցող տիպարը, իր անձն ու գործը արժանի են լուրջ ուշադրության եւ ուսումնասիրության:



Ալիք-ից

«Քարավան»-ը միշտ զարմացնում է

«Քարավան» պարախումբը, որը երկար տարիներ ճանաչված է իրանահայ համայնքում իր կատարողական մակարդակով, երբեք չի դադարել զարմացնել համդիսատեսին իր ժամանակակից նորամուծություններով ու մատուցման զանազանությամբ: Այս մասին է վկայում նրա տարեկան ելույթը Հայ Ուս. «Չհարմահալ» միության բեմում՝ երկու օր անընդմեջ (2010 թվի հունվարի 28-ին և 29-ին) լեփ-լեցուն սրահում լավագույն ներկայացնելով բազմապիսի պարեր և արժանանալով հասարակության բարձր գնահատանքին՝ բուռն ծափահարություններին, իսկ ելույթի վերջում՝ նաև ԹՀԹ-ի Առաջնորդի համակրանքին ու մեծարանքին: Գովեստի արժանի է պարախմբի անդամներից յուրաքանչյուրը, և կարելի է երկար խոսել բոլոր պարերի մասին, սակայն ամեն ինչ ամբողջական կլինի եթե ասենք, որ հաջողությունների գրավակամը լավ գեղարվեստական ղեկավար ունենալն է, որը ոչ միայն սովորեցնում է, այլև հոգատարությամբ է վերաբերվում իր սաներին, մեծագույն նվիրումով ու սիրով է լուծում պարախմբի հետ կապված բոլոր հարցերը՝ սկսած մանրուքներից մինչև ելույթի ամբողջական պատրաստումը: Ահա այսպիսին է իրանահայ համայնքում սիրված ու ճանաչված պարուսույց օր. Սվետլանա Բադալյանը: Էլ ավելի ուժ ու կորով ցանկանալով օր. Բադալյանին ուզում ենք նշել նաև, որ ելույթը տեղի էր ունենում «Հայ Կին» միությանը կից «Արմենուհի» միության հովանավորությամբ: Ելույթի հաջողութեանը նպաստեցին նաև փորձավար Երազիկ Թահմազյանի, Երզնուի Անիթա Մանուկյանի, ասմունքողներ՝ Անի Նազարյանի և Արգիշտի Աղազարյանի և, իհարկե, հաղորդավարներ՝ Լիլիթ Սարգսյանի և Սասունիկ Սադեղի ջանքերը:

Սոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Գարախանյան Միրակցի

Մի քիչ էլ մտածենք ու հետ նայենք մեր անցած ճամբին եւ տեսնենք եթե Աստված ոչ արած սխալներ ենք ունեցել գոնե ջանանք ճշտենք: Օրինակ՝ հենց այս Միրակցի դպրոցի կարճատես ղեկավար վարչության սխալ որոշումներին նայենք: Գրագրների զավակներ պատանի ջախելների համար աղջիկ-տղա պարի գիշերներ էին կազմակերպում որին բանվորների երեխաներից ոչ տղա, ոչ էլ աղջիկ որևէ մեկը չէին հրավիրվում և այդ երիտասարդական հանդիպումի պարի և շփումի գիշերները բանվորի զավակներս դպրոցի պատի շրջակայում էինք բայց ներս գնալու իրավունք չուներինք, այդպես բանվոր զավակները տարեկից ընկերներով դպրոցի բակում պտտում էինք մինչև այդպես կոչված «Թե-ԴԱՆՍԱ»-ն վերջանար, այդ գրագիրների տղա-աղջիկ զավակները իրենց պապերի մեքենաներով տուն գնան և մենք էլ միանսովենք և տուն գնանք: Էլի իբրեւ մի այլ օրինակ, մեզ նմաններին այդ տարիներին անվանում էին պարսկերենով «Փողոցային ԼԱԹ», որովհետեւ բանվոր դասակարգից էինք, և չարածիություններ էինք անում և կռվում ջարդվում էինք ոչ-հայ տղաների դեմ՝ հայ աղջիկներին «ՄԱԹԱԼԱԹ» գոցող (անվայել խօսք ասողներին): ԿՈՇՏ տղերք էինք: Օրինակի համար՝ երկաթի ձողերից սարքած ելարաններից 84 աստիճանից բարձրանում էինք հազարավոր լիթրանոց հսկա ջրերի պահեստների գլխի վրայ որ քաղաքի ջրի պահուստներ էին, գլուխից թռնում ջրի ամբարի մեջ որ 20 մետր խոռը և 30 մետր լայն էր և լողանում էինք մինչեւ մեր ընկերներից որոշված հերթապահը մեզ իմաց էր տալիս որ հեռվից ջրի պահեստի պահակը երեվում է, և մենք ջրից դուրս գալով, երկաթե աստիճաններից կատուի պես ճարպկորեն ցած գալիս և փախչում, և խեղճ պահակը ուշուցն տալով մեզանից տարիքով մեծ հազիվ էր կարողանում մեզ հասներ և բռնել պատժել և մենք հաղթական զգացումով փախչում և պատժից փրկվում էինք մինչեւ մի օտար անգամ: Բայց և այնպես Մասչէդ Սուլայմանի Միրոզադ դպրոցը իր հսկա սրահով, 12 դասարաններով, մեծ բակով, եկեղեցիով և փոքր մարզադաշտով մի հսկա հայեցի սերունդ կրթեց ու դաստիարակեց և պիտի ասենք որ բանվոր դասակարգն էլ ունեցավ իր փոքր ներդրումը տեղիս հայ ժողովրդի կյանքում, հակառակ նյութական դժվար պայմանների: